ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, շ.1, Հեռ. 060656505 , info@mecamor.am

N **03704**
05 օգոստոս 2024 թ.

«ՌԱՖՖ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Վ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մկրտչյան.

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար 2023 թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Հայկական բնակավայրի մանկապարտեզի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումն և 07.02.2024թ-ին Ձեզ հետ կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում, որի շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 03.07.2024թ-ին ծանուցվել է համաձայնագիր:

Սակայն սահմանված ժամկետում՝ մասնավորապես 26.07.2024թ-ը ներառյալ չի ներկայացվել Ձեր կողմից հաստատված համաձայնագրի տարբերակը, ինչպես նաև միակողմանի հաստատված տուժանքի տեսքով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովվումները չի փոխարինվել կանխիկ փողով կամ բանկերի կողմից տրամադրվող երաշխիքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք հանձնարարել համապատասխան ստորաբաժանումներին «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումի հետ կնքված աշխատանքների կատարման ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/100 ծածկագրով պայմանագիրը միակողմանի ամբողջապես լուծել:

Միաժամանակ, հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակում սահմանված կարգով մասնակիցը ներկայացրել է հայտի ապահովում, որը ներկայացված է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 06 դեկտեմբերի 2023թ-ին թողարկված բանկային երաշխիքի տեսքով՝ «ԵՐԱՇԽԻՔ ԹԻՎ 22 13 40 246342/10»՝ 14,125,500.00 (տասնչորս միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով, որը սահմանված կարգով պետք է գանձվի «Ռաֆֆ Գրուպ» ՍՊԸ և «ՍԻՄԱ-ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումից:

Տեղեկացնում ենք նաև, որ վերոնշյալի կապակցությամբ Մեծամորի համայնքապետարանը դիմել է Ձեզ սպասարկող բանկին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Մուրադյան